Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի փնօրեն Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Սուրբ Էջմիածնի միաբաններ:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի առաջնորդությամբ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այցելեցին Մայր Տաճար, եղան Տաճարի թանգարանում, ուր նրանց ներկայացվեցին Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի նվիրական սրբությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Հոկտեմբերի 31-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների նորանշանակ դեսպան Ջոն Ա. Հեֆերնին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով դեսպանին եւ իր բարեմաղթանքները բերելով նրա առաքելությանը, անդրադարձավ երկու երկրների միջեւ առկա ջերմ եւ սերտ հարաբերություններին: Նորին Սրբությունն ի դեմս դեսպանի շնորհակալություն հայտնեց ԱՄՆ-ի իշխանություններին՝ տարածաշրջանում առկա խնդիրների լուծմանն ուղղված ջանքերի եւ մասնավորաբար հայ ժողովրդի հանդեպ մշտապես ցուցաբերվող աջակցության եւ զորակցության համար:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց Մինսկի խմբի համանախագահների եւ խմբի համանախագահող երկրների նախագահների կարեւոր դերակատարությանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եւ տարածաշրջանում խաղաղության հաստատման գործում: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների գործադրած ջանքերին՝ ի խնդիր տարածաշրջանում խաղաղության եւ համերաշխության մթնոլորտի ձեւավորման:

Զրույցի ընթացքում դեսպանին ներկայացվեցին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու գործունեությունը կյանքի տարբեր ոլորտներում եւ Եկեղեցու առջեւ ծառացած զանազան մարտահրավերներ:

Իր հերթին նորանշանակ դեսպանն ուրախություն հայտնեց Մայր Աթոռում լինելու կապակցությամբ եւ շնորհավորեց Վեհափառ Հայրապետին ծննդյան 60-ամյակի եւ գահակալության 12-րդ տարեդարձի առիթով:

Հանդիպմանը ներկա էին ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը եւ ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ